

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՒՌ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ա. և Բ. ՆԻՍ

ՈՒՐԲԱԹ, 12 Օգոստոս, 2005

Ա- Հայաստանի վերանկախացումն ետք Հայաստան-Սփիուք գործակցության ուղղությամբ, ցարդ՝ նպատակային ու կազմակերպչական հիմնական նկատարելի քայլեր չառնուեցան, երկուստեք:

Բ- Համահայկական հիմնադրամը, ազգային տուրքի գաղափարով, մնաց սահմանափակ իր տարողությամբ, գաղափարական ու վստահելիության անբաւարարութիւններու պատճառով:

Գ- Դժբախտաբար, Հայաստան-Սփիուք Համահայկական Խորհրդաժողովները եղան զգացական հանդիպումներ, առանց ազգային հիմնահարցերու համապարփակ սահմանումի, ծրագրաւորումի ու գործադրութեան: Առաջին Խորհրդաժողովի առիթով պատրաստուած մասնագիտական ուսումնասիրութիւնները ունեցան իրենց տեսական օգտաշատ դերը, սակայն՝ մնացին լոկ առաջարկ: Համահայկական Գերագոյն Մարմիններու ղեկավարութեան առաջարկներն ու պաշտօնական խոստումները մնացին անհետեւանք, մոռացութեան տալով համահայկական Էական հիմնահարցերու առ կայութիւնը, ու անոնց համազգային լուծումներ գտնելու պատմական ու գործնական անհրաժեշտութիւնը, բաւարարուելով՝ կարգ մը երկրորդական ծրագիրներով:

Խորհրդաժողովն առաջ եւ ետք, բազմաթիւ ղեկավարներ ու պարզ անհատներ, միաժամանակ մտալլկում ապրելով, արտայայտուած են մեր ազգային հիմնահարցերուն լուծումներ գտնելու յարմարագոյն միջոցներուն մասին: Այդ արտայայտութիւնները տակաւին կը մնան, «ձայն բարբարոյ յանապատի», տեսական մտածողութիւնը յարմարաւէտ ծրագիրներով գործնականացնելու կամքի եւ կարելիութիւններու մատակարարման բացակայութեան:

Համազգային ապագայի համապարփակ ծրագրաւորումի անհրաժեշտութիւնը ու անոր յաջողութեան նախապայմանները.

Ա- Արժեւորում Հայաստանի եւ Սփիուքի ներկայ կարողականութեան, քաղաքական, տնտեսական, քարոզչական, փոխ-յարաբերութիւններու ու մշակութային մարզերուն մէջ:
Բ- Համահայկական կեդրոնական կազմակերպութեան մը գոյարունը, համազգային տեսիլքով, հասարակական յտակ արժէքներով ու ռազմավարական ծրագրաւորումով, իրագործելու համար համազգային հիմնական նպատակներ իրենց առաջնահերթութիւններու կարգով ու հսկելու անոնց փուլային գործադրութեան, զօրակոչի ենթարկելով Հայաստանի եւ Սփիուքի անհատական ու հաւաքական ամբողջական կարելիութիւնները:

Որպէս ազգ, Հայաստան եւ Սփիուք գործակցաբար, կամ առանձին առանձին, վտանգաւոր յայադումով, անհրաժեշտ է որ ծրագրենք մեր յառաջիկայ տասը, հարիւր, հազար, տարիներու ապագան: Տեսիլքը, տեսական մտածողութիւնն ու երազը նոյնքան Էական են որքան աննօրեայ գործնական իրագործումները:

Առանց տեսիլքի ու յտակօրէն սահմանուած նպատակներու, որպէս հաւաքականութիւններ, մենք չենք կրնար ունենալ նպատակասլաց եւ համապարփակ աշխատանք, քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային եւ կրթական մարզերուն մէջ:

Ցարդ՝ կրաւորական բուսականութեամբ, մենք ժամանակին յանձնած ենք մեր բոլոր հարցերուն լուծումը:

Մարտ 10, 2005

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՌ-Զ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Մեպտեմբեր 22, 23 1999-ին Երևանի մեջ կայացաւ Հայաստան-Սփիրք Խորհրդաժողովը, Սփիրքի մտաւորապէս 45 երկիրներու 700 պատգամաւորներու եւ Հայաստանի 300 ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Պատմական երկու օրերուն, Երևանի Համերգային Համալիրին կլոր սեղանին շուրջ հաւագուած էին, առաջին անգամ ըլլալով, ազգային ղեկավարութեան բազմակողմանի եւ բազմաթիւ ներկայացուցիչներ, խորհրդակցելու համար ու ազգային հիմնահարցերուն լուծումներ որոնելու, ՄԻԱՍՆԱԲԱՐ:

Անշուշտ Խորհրդաժողովը առաջին հանդիպում մըն էր եւ հաւակնոտութիւնը չունէր անմիջական լուծումներ առաջարկելու բազմազան ազգային հարցերուն:

Սակայն, հետեւեալ յատկանշական դիրքորոշումները կարելի է նկատել դրական երեւոյթ որոնք պէտք է վերածուին կազմակերպեալ գործնական որոշումներու ու գործադրութեան.

Ա- Հայաստանի Հանրապետութիւնը Սփիրքը կ'ընկալէ որպէս հաւասար գործընկեր եւ իրատեսօրէն կը հաւատայ որ Հայրենիքի հետ համագործակցութիւնը ըլլայ տնտեսապէս շահաւետ:

Բ- Սփիրքի բազմաճիւղ ղեկավարութիւնը, հակառակ իր ներքին բազմամակարդակ հակասութիւններուն, իրագլխէն է ներկայ պատմական հանգրուանին իր կատարելիք դերին, Սփիրքի եւ Հայաստանի մեջ ու կը փորձէ յարմար միջոցներով իր մասնակցութիւնը բերել, հայրենաշինութեան աշխատանքին:

Գ- Հայրենի ղեկավարութիւնը, գիտակից անցեալի յուսախաբութիւններուն եւ անոնց ծնունդ տուող սխալներուն, կը հասկնան թէ ներդրողները կը պահանջեն ոչ անհատական, այլ կառուցային երաշխաւորութիւններ, յստակ ու վստահելի օրէնսդրութեան մը ծիրին մէջ:

Դ- Փոխադարձ վստահութիւնն ու հանդուրժողականութիւնը անհրաժեշտութիւն են: Հայրենի Կառավարութիւնը կը ձեռնարկէ իրաւական, ֆինանսատնտեսական, հարկային եւ այլ ներքին բարեփոխումներու եւ անոնց գործընթացը թափանցիկ դարձնելու ուղղութեամբ կ'առնէ անմիջական միջոցառումներ: Միաժամանակ, որպէս պետութիւն, պաշտօնական յայտարարութեամբ կը շեշտէ Սփիրքի քաղաքական եւ այլ ազգային կառոյցներուն հետ ունենալ համահաւասար դրական գործակցութիւն:

Խորհրդաժողովին անմիջական իրագործումը կարելի է նկատել մասնակցողներուն ընդհանրապէս պատասխանատու արտայայտութիւնները: Փաստուցաւ այն իրողութիւնը թէ մտածողութեան որոշ մակարդակի մը վրայ հատուածական տարակարծութիւնները կը նօսրանան ու կը վերածուին համազգային մտահոգութիւններու: Այս ուղղութեամբ, ակնկալելի է որ յառաջիկայ տարիներուն Խորհրդաժողովը ունենայ անուղղակի արդիւնքներ հետեւեալ մարզերուն մէջ.

Սփիրքի ազգային կառոյցները վերակազմաւորուին, իրենց գործունէութիւնը կ'երկարացնելով համազգային նպատակներու շուրջ: Հայաստան-Սփիրք, Սփիրք-Սփիրք մշտական հաղորդակցութիւններու միջոցով կարելի է հարթել կարգ մը հոգեբանական դժուարութիւններ որոնք տակաւին արգելք կը հանդիսանան Սփիրքեան Ներկայացուցչական Վերին Մարմնի մը ստեղծումին: Փոխադարձ վստահութիւնը կը ստեղծուի ժամանակի ընթացքին, երբ անհատական եւ հատուածական փաստասիրութիւններ կը կերպարանափոխուին ազգային նպատակասլաց աշխատանքի, անսակարկ անկեղծութեամբ:

Հայաստան-Սփիոք տնտեսական, մշակութային ու ընկերային կապերը կրճատված զարգանալ, յառաջացնելով դրական փոփոխություններ: Ընտանեկան, երիտասարդական ու ուսանողական փոխադարձ այցելություններ կը զորացնեն Սփիոքի ազգային պատկանելիության զգացումը եւ միության գաղափարը: Ժամանակի ընթացքին, այդ այցելությունները կրճատվեն պտղաբերունքով երկարատև բնակութեամբ ու շահատու տնտեսական ներդրումներով:

Հայրենիքի հզորացումը անպայման կ'ունենայ իր դրական դրսևորումը Սփիոքի մեր մշակութային ինքնութեան պահպանման աշխատանքին մէջ: Ինչպէս նաեւ, Սփիոքի վերակազմաւորումը ազգային նպատակներու շուրջ, կ'ունենայ իր դերը Հայաստանի բարգաւաճումին մէջ:

Մկրտիչ Լ. Պուլտուբեան
04.10.99

Խորհրդածողովի որոշումներէն.

Ա. Մէկ տարիով կ'երկարէ կազմակերպիչ յանձնախումբին կեանքը
Բ. Յանձնախումբին վրայ պարտք կը դնէ մինչեւ վեց ամիս առաջացնել վերոյիշեալ վեց զեկոյցներուն համապատասխան մասնագէտներէ բաղկացած վեց յանձնախումբեր եւ եօթներորդ յանձնախումբ մը, որ պիտի ուսումնասիրէ կառոյցի հարցը:

ՀՀ Նախագահ Ռոպերթ Քոչարեան

Անհրաժեշտ դասեր քաղելով անցեալի փորձից, մենք երկխօսութեամբ պէտք է յտակացնենք ազգային առաջնահերթութիւնները եւ գտնենք այնպիսի կազմակերպչական ձեւեր, որոնցմով հնարաւոր կը դառնայ երկխօսութիւնը տեղափոխել առարկայական խնդիրների լուծման հարթութեան: Մենք պարզապէս այլընտրանք չունենք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս

Այլ խօսքով, պէտք է ստեղծել հիմնական առաջադրանքներու շուրջ Հայաստան-Սփիոք գործակցութիւնը դիւրացնող այնպիսի աշխատանքային մասնագիտական խմբակներ ու տիմամիք մեքանիզմներ, որոնք կրճատեն ապագային բնական ընթացքով վերածուիլ մնայուն կառոյցներու:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՈՔ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գ. ՆԻՍ

ՈՒՐԲԱԹ, 12 Օգոստոս, 2005

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՈՒ ՍՓՈՒՄ

Ինչպէ՞ս կարելի է, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիոքի ներկայ պայմաններուն մէջ, պահպանել, վերակենդանացնել, զարգացնել ու տարածել Հայկական մշակութային ժառանգը:

Համաշխարհայնացումը իր փոխանցներուն կողքին կը ստեղծէ բազմազան օգտագործելի աղիքներ ու միջոցներ, պահպանելու համար տարբերութիւններն ու իրայատուկ

ինքնուրույնները: Մանաւանդ՝ ստեղծելով կարելիութիւններ մշակութային ստեղծագործութիւններու անսահման ու արագ տարածման:

Համացանցի ընձայած դիրութիւններու օգտագործումը, համազգային փոխ-յարաբերութիւններու ծիրին մէջ, իր անհուն կարելիութիւններով հանդերձ, տակաւին կը մնայ թերի ու սահմանափակ: Կարեւորագոյն արգելակը կը մնայ ուղղագրութեան հարցը իր գործնական բազմաթիւ ժխտական հետեւանքներով: Տառաշարքի բազմազանութիւնը իր անհաճոյ անակնկալներով, վերածուած է գրաւոր Նոր Բաբելոնի իր գործնական ու փոխաբերական իմաստներով:

Միացեալ ուղղագրութեան բացակայութեան, համացանցի վրայ, Հայերէնի միացեալ ուղղագրական սրբագրութեան, ինչպէս նաեւ համակարգչային թարգմանչական ծրագիրները կը մնան անհասանելի: Ու նոյն ժողովուրդին աշխարհատարած անդամները, յաճախ կը ստիպուին օգտագործել իտալերէն տարրերը, իրենց համացանցային նամակագրութեան մէջ: Մինչդէռ, լեզուական համազգային, գործնապաշտ, հասարակ յայտարարի մը որդեգրումով, որքա՞ն հեշտ պիտի ըլլար օգտագործել համաշխարհայնացումի անհուն կարելիութիւնները, ի նպաստ՝ Հայկական մշակոյթի տարածման ու զօրացման:

Ուղղագրութեան հարցը աւելի տագնապալի կը դառնայ երբ նկատի առնենք համացանցի ընձեռած արխիւային, հետազօտական փնտրտութի, էլեկտրոնային գիրքերու, տարբեր լեզուներով, բնական ու սովորական դարձող կարելիութիւններէն օգտուելու մեր գրկանքը: Աւելի գործնական է, պահել երկու ուղղագրութիւնները եւ կրկնակի տիտանային աշխատանքներով ստեղծել մեր մշակութային հարստութեան քարոզչութեան կայքէջերը, երկու տարբեր Հայերէն լեզուներու համար: Արդ՞օք, կարելի չէ մասնագիտական, դրական ու կառուցողական մօտեցումով հասնիլ հասարակ յայտարարի, երկուքի վերածուած լեզուներուն լաւագոյն տարբերը ընդելուզելով, մատչելի ըլլալ բոլորին:

Երբ աշխարհի բոլոր մեծ գրադարաններն ու թանգարանները, գրականութիւնն ու մամուլը ակնթարթային արագութեամբ հասանելի են բոլորին search engine-ներու միջոցով, մենք տակաւին կը փորձենք անտեսել կորսուող ժամանակին արժէքը ու Սփիտքի տարածքին աճող Հայապարպումի աւերը:

Համաշխարհայնացումի վտանգը մեզ կը ջլատէ, եթէ չկարենանք որպէս ազգ, միացեալ գրաւոր լեզուով, լաւագոյնս օգտուիլ անոր տրամադրած մշակութային քարոզչութեան անհուն կարելիութիւններէն, գրաւոր ու տեսա-լսողական բոլոր մարզերուն մէջ:

Չինաստանի մրցակցական զօրութիւնը օրինակելի իրողութիւն մըն է, փաստելու համար որ կարելի է համաշխարհայնացումի վտանգը շրջանցել, հասնելու համար տնտեսական ու ընկերային բարգաւաճ վիճակի, միաժամանակ՝ պահպանելով ազգային իւրայատուկ գաղափարախօսութիւնն ու առժէքները:

Գրականութեան, մամուլին, թատրոնին, երգին, պարին ու կերպարուեստին հանդէպ բացայայտուող անտարբերութեան արմատները պէտք է փնտրել մեր ազգային ինքնութեան եղափոխութեան ու նոր սերունդները հետաքրքրող ստեղծագործական նոր շարժումներու բացակայութեան մէջ:

Պայման է ունկնդրել նոր սերունդին ու ստեղծել իր նախասիրութիւնները բաւարարող նոր երկարաշունջ շարժումներ ու արտայայտամիջոցներ: Վերջին տարիներուն, բոլոր մշակութային միութիւնները, դառն փորձառութիւնը ապրեցան տքնաջան աշխատանքէ ետք զանուրու ժողովրդական անտարբերութեան փորձաքարին:

Հասարակական հիմնական արժէքներու ու նպատակներու յստակացումով կարելի մշակութային մարզը աշխուժացնել, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիտքի զանազան կազմակերպութիւններու համակարգուած գործակցութեամբ եւ յարմարաւետ նոր ծրագրաւորումներով:

Բազմատասնեակ լեզուներու մեր տիրապետութեամբ, քարզանչական աշխատանքով կարելի է ստեղծել նոր հորիզոններ, ներգրաւելու համար Հայերէն լեզուն կորսնցնող սերունդներու եւ միջազգային հանրութեան հետաքրքրութիւնը: Ինչպէս նաեւ՝ կարելի է ստեղծել, համացանցային նախակրթական ու բարձրագոյն ուսման ծրագիրներ, բարարելու համար հայեցի դաստիարակութեան առնուազն նախնական պահանջքները, մանաւանդ՝ այն վայրերուն մէջ, ուր գործնականապէս անկարելի է ունենալ կրթական մնայուն հաստատութիւններ:

Յետ 1991-ի Հայը, իր երրորդ սերունդով հասած է վտանգաւոր հանգրուանի մը: Մենք, որպէս ամբողջական քաղաքացիներ մեր ապրած երկիրներուն, բնականաբար ազդուելով մեր շրջապատի դրական ու ժխտական բազմադիւր ազդակներէն, պաշտօնական եւ ընկերային կաշկանդումներէն, ողողուելով նոր սովորութիւններով, Հայութիւնը տակաւին կրնանք նկատել, Ազնաւորի գեղեցիկ մէկ խօսքով, մեր կրօնը: Սակայն՝ առանց ազգային հաւատամքի:

Մկրտիչ Պուլտութեան

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶ

Դ. ՆԻՍ

ՈՒՐԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍ, 2005

Կրթական որեւէ համակարգ կամ հաստատութիւն պէտք է ունենայ յստակօրէն սահմանուած առաքելութիւն, ու զայն իրականացնելու պատշաձ ծրագիր, յարմարաւետ միութեամբ-բարոյական կազմակերպութեամբ:

Սփիտքահայ կրթական համակարգի պարագային, մարդուն ու քաղաքացիին պատրաստութեան առաքելութիւնը անլի կը բարդանայ, ընդգրկելով իր ծիրին մէջ հայեցի դաստիարակութիւնը, այսինքն՝ հայութեան յատկութեան հաւատացող, հայերէն մտածող ու աղօթող, եւ դարերու ազգային մշակութային ժառանգութիւնը պահպանող ու տարածող անձերու պատրաստութիւնը:

Կը բարդանայ որեւէտեւ, Սփիտքի պատմութեան ութը տասնամեակներէն ետք տակաւին կը փորձենք անտեսել այն իրողութիւնը թէ, որպէս ամբողջական քաղաքացիներ մեր ապրած երկիրներուն, մեր շրջապատի դրական ու ժխտական բազմադիւր ազդակները մեր հաւաքական ու անհատական ինքնութիւնը եղափոխութեան ենթարկելով, մեզի կը ստիպեն վերաբժեւորել տարիներու ընթացքին ժամանակավրէպ դարձած սովորութիւններ ու կրթական ծրագիրներ, ականջալուր ըլլալով նոր սերունդի ծնողներուն եւ անոնց զաւակներուն ակնկալութիւններուն, ազգային կրթական համակարգին նպատակը, խորքն ու ձեւը այժմեականացնելու հրամայականով:

Կրթական համակարգը անկիւնաքարն է ընկերային բարօրութեան: Սփիտքի Հայութեան չորրորդ սերունդին յարմարաւետ կրթական ամբողջական ծրագրի մը որեւորմը անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Այդ պէտք է կատարուի նկատի առնելով հոգեբանական, ընկերային, տնտեսական, քաղաքական, պատմական ու գործնական բազմատեսակ տուեալներ ու ազդակներ:

Կրթական համակարգը անցեալ եօթ տասնամեակներուն

Յայտարարուած նպատակներ.

Պահպանել ազգային ինքնութիւնը հայեցի դաստիարակութեան միջոցաւ որպէսզի յարմար ժամանակին կարելի ըլլայ տէր կանգնիլ մեր ազգային իրաւունքներուն, երբ

միջազգային ու շրջանային քաղաքական նոր իրադրություններ նոր կարելիություններ ստեղծեն:

Իրագործումներու գնահատութիւն.

Եօթ տասնամեակներու ընթացքին Հայկական վարժարանները ցամբած են յարաբերաբար յաւ մակարդակի ընդհանուր կրթութիւն, կարելիութիւն ստեղծելով իրարյաջորդ սերունդներուն որպէսզի բարելաւեն իրենց ընտանիքներուն տնտեսական ու ընկերային մակարդակը, ըլլան պատասխանատու քաղաքացիներ ու միաժամանակ իրենց մասնակցութիւնը բերեն համայնքային աշխատանքներուն:

Յարաբերաբար, տուեալ երկիրներու կրթական մակարդակին, կարելի եղած է ցամբել, որակաւոր ընդհանուր ու Հայեցի դաստիարակութիւն մը: Ծրագիրը ընդգրկած է ընհանուր գիտելիքներ, ընդունակութիւններու զարգացում, արուեստներու հանդէպ սեր եւ մանաւանդ՝ հայեցի դաստիարակութիւն իր ամենօրեայ ապրումներով ու մշակութային հարստութեան յայն դաշտով, ընդգրկելով՝ լեզուի տիրապետութիւնը, պատմութեան ու գրականութեան գնահատական ու քննադատական արժէտը:

Տասնամեակներ ամբողջ, հաւատաւոր դաստիարակներ, կարողացան պատրաստել մարդն ու Հայր, միաժամանակ, առանց զիջողութեան: Լիբանանի պարագային, մինչեւ 1960-ական թուականները, Հայկական երկրորդական վարժարաններուն մէջ, կարելի էր միջազգային ու պետական քննութիւններուն արձանագրել բարձր յաջողութիւններ, միաժամանակ՝ գրաւոր ուսումնասիրութիւններ պատրաստել, Կոստանդին Երզնկացիի կամ Մովսէս Խորենացիի մասին:

Կրթական համակարգի ներկայի դժուարութիւններուն քննարկումը

Ազգային հաւատամքի մը եւ ազգային նպատակներու հասնելու ուղեգիծի մը բացակայութեան, Հայ դպրոցը յեղաշրջուած է, յարմարելով յարափոփոխ կեանքի պահանջներուն ու պայմաններուն: Հայերէն լեզուն սորվելու տրամաբանական, գործնապաշտ եւ համոզիչ պատճառարկումի մը բացակայութեան, առաջին սերունդի նուիրեալ դաստիարակները չունեցան բաւարար յաջողներ: Հնարոյր դասագիրքեր, չփոխանակուեցան մանկավարժական արդիական տպագրութիւններով, որոնք ըլլային բաղդատելի այլ լեզուներու ու գիտական ճիւղերու դասագիրքերուն: Նկարագիրի կազմաւորումը դպրոցներու մէջ եղաւ պատահական, անկատար եւ աննպատակ: Բարձրագոյն ուսման ճիւղերու ու ասպարէզի ընտրութիւնները եղան անհատական, առանց նկատի առնելու ազգային ապագայապաշտ նկատումներ:

Վերջին շրջանին, Լիբանանի մէջ, պետական եւ համալսարաններու մտքի քննութիւններուն մէջ յաջողելու մտահոգութիւնը եղաւ առաջնահերթ, նուազեցնելով կարելիութիւնը հայեցի դաստիարակութեան, զայն վերածելով, կարգ մը ծնողներու եւ աշակերտներու միտքին մէջ, զգացական, անպէտ գիտելիքի: Մինչ՝ ազգային նպատակներու յստակ սահմանումով կարելի էր ստեղծել նոր երանդ ու յարմարաւետ միջոցներով կրկին արժեւորել Հայեցի Դաստիարակութեան կարելիութիւնը:

Կրթական քաղաքականութեան յարաջիկայ 25 տարիներու ծրագիր

Ազգային նահանջը Սփիւքի բոլոր ճակատներուն վրայ ակնյայտ է: Դասալքութեան զարգացող բաղադրեալ տոկոսը արդէն իսկ մեր աճումը վերածած է ժխտականի: Յառաջիկայ քանի մը տասնեակ տարիներու ընթացքին չորրորդ սերունդը կրնայ բոլորովին պարպուիլ իր Հայկական ինքնութենէն եթէ անկարելի ըլլայ անոր առաջարկել նոր եւ համոզիչ ազգային հաւատամք, Հայ ծնելէ ետք հաւատաւոր Հայ մնալու գործնական եւ խորհրդանշական բաւարար խրախուսանք: Որպէս հաւաքականութիւն պէտք ունինք մեր ինքնութեամբ հպարտանալու: Պրպտենք մեր անցեալի եւ ներկայի ապրող գանձերը եւ վերածենք զանոնք հպարտութեան զեղուն աղբիւրներու:

Որպես աշխարհաքաղաքագիներ, Հայերը կարելիություն ունին ըլլալու գործունեայ ու յաջող անհատներ բոլոր մարզերու մէջ՝ միաժամանակ պահպանելով ու տարածելով իրենց ազգային ժառանգութիւնը, պայմանով որ ունենան համոզիչ ու գործնական պատճառարկում ընկերային ու տնտեսական գորակցութեան մը ծիրին մէջ որ հիմնուած ըլլայ համաձայնական արժեքահամակարգի (ethics by agreement) մը վրայ:

Հետեւաբար, մարդու թի պատրաստութեան երկարաշունջ ներդրումը, մանկապարտէզէն մինչեւ յետ-համալսարանական բարձրագոյն ուսում ու գործունէութիւն հանրային ու անձնական ասպարէզներու մէջ կը վերածուի ռազմավարական նպատակակետի, իրագործելու համար ուժականութեամբ լեզուն նպատակայարմար կրթական քաղաքականութեան, բարարարելու համար համայնքային կարիքները՝ քաղաքական, քարոզչական, օրինական, ընկերային, տնտեսական եւ մշակութային մարզերու մէջ:

Թէեւ ոչ առաջինն ու միակը իր տեսակին մէջ Հարիւրի Հիմնադրամի քաղաքական ու տնտեսական նպատակներ հետապնդող կրթական ծրագիրը փաստ մըն է գործնական կարելիութիւններու եւ՝ հետեւելի օրինակ մը: Տասնեակ մը տարիներու ընթացքին, բազմահազար դպրոցական ու համալսարանական կրթաթոշակներու միջոցով կարելի եղաւ պատրաստել ամբողջ սերունդ մը որոնք ընգրկուեցան Հարիւրի անձնական հաստատութիւններուն ու Լիբանանի պետական համակարգին մէջ, նիւթական յարաբերաբար յաւ պայմաններով վերածուելով Հարիւրի շնորհակալ ու հաւատարիմ մարդու թի: Նոյն շրջանին, Լիբանանի տարածքին նպաստը կալ բազմահարիւր աշակերտներ ու ուսանողներ առիթ ունեցան օգտուելու զանազան մարդասիրական ու բարեգործական միութիւններէ ու անհատ անձերէ, կարենայ ամբողջացնելու համար իրենց կրթութիւնը առանց որեւէ ազգարեզային ուղղութեան ու հետ-շրջանաւարտութեան հաւաքական հեռանկարներու: Մինչ, համապարփակ կրթական քաղաքականութեան մը ծիրին մէջ կարելի պիտի ըլլար զանոնք տեղաւորել յարմար պայմաններով, ազգային ու միջազգային հաստատութիւններու մէջ որպէս մասնագէտներ եւ Հայկական գորակցական գանգի մը նախակարապետները, արժեւորելով Հայեցի դաստիարակութեան արդիւնքը բաղադրամամբ նիւթական ներդրումին:

Երկարաշունջ քաղաքական ու ընկերային նպատակներու բացակայութեան, կրթական համակարգը կը ցուցնէ Սփիւքի Հայութեան համընդհանուր պատճառարկումի թուլութիւնը: Հայեցի դաստիարակութեան ելեւմտական աճող մտահոգութիւնները կարելի է բարարարել երէ վստահ ըլլանք անոր նպատակայարմարութեան՝ որպէս անձնական ու հաւաքական նպատակներու հասնելու յարմարաբար միջոց: Այլապէս, ամբողջ համակարգը կը կորսնցնէ իր իմաստը ու կը դատապարտուի դանդաղ մահուան:

Շուկայական տուեալներն ու պահանջները յարատեւ յեղաշրջումի մէջ են: Հետեւաբար Սփիւքի դակավարութիւնը հեռատեւ քաղաքականութեան մը որդեգրումով եւ նպատակասլաց ծրագիրներով Հայկական վարժարաններու պատասխանատու մարմիններուն միջոցաւ պէտք է կարենայ առնուազն ասպարէզային ընտրութիւններու պարագային ուղղութիւն տալ աշակերտներուն որոնք կարողութիւնն ունին շարունակելու իրենց համալսարանական ուսումը եւ երբեմն՝ քաջալերել զանոնք ընտրելու այնպիսի ձեւեր մասնագիտութիւններ որոնց կարիքը կը զգացուի ազգային հասարակական մարզին մէջ, միաժամանակ լաւագոյնս բարարարով անոնց անհատական ակնկալութիւններն ու նոյնիսկ փառասիրութիւնը: Երկրորդ պարագային, անհրաժեշտ է ունենալ հասարակական կարիքներու բարարարումին յարմարաւետ ծրագիր՝ քաղաքական, միջազգային յարաբերութիւններու, ֆինանսական, տնտեսական, դրամատնային, օրինական, լրատուական, կրթական, գիտական, արուեստի եւ տեղեկութիւններու թէքնոլոճիայի մարզերուն մէջ:

Այժմ՝ մենք պէտք ունինք հարիւր քառասուն լեզուներով նոր թարգմանիչներու, միջազգային քաղաքական գործիչներու, տեսալսողական բոլոր մարզերու լրագրողներու, կամաւոր պատասխանատու նամակագիրներու, քաղաքական ճնշումի խմբակներու, միջազգային ճանաչում ունեցող Արուեստագէտներու, գիտնականներու եւ դրամատներու, Հայկական դրամատուներու եւ համաշխարհային դրամատուներու մէջ

աշխատող Ընդհանուր տնօրէններու, օտար լեզուներով արտայայտուող Սարոյեաններու եւ մեր դարաւոր մշակոյթի ամենօրեայ ատարանիչներու:

Հայագիտական հիմնարկներու առաքելութեան այժմեականացման արհրաժեշտութիւնը

Հայագիտութեան դաշտը, Սփիւքի ժամանակակից պայմաններուն մեջ, պէտք է ընդգրկէ աշխարհացրի գաղութներուն ութսունամեայ պատմութեան քննական արժեւորումը, անոնց ներկային հաւաքական ամբողջական կարելիութիւններուն գիտակցութիւնը, եւ մանաւանդ՝ ապագային էական նպատակներուն սահմանումը:

Պատմութեան քննական արժեւորումը կը պայմանաւորուի քաղաքական, ընկերային եւ մշակութային բազմաթիւ տուեալներու գիտական հաւաքումով եւ անոնց համադրական վերծանումով: Նոյնիսկ՝ այլապէս անարժէք նկատուող պատմական առանձին յիշողութիւններու մնացորդներ եւ յիշատակներ, կրնան լոյս սփռել մոռցուած արժէքներու վրայ:

Պատմական տուեալներու համառօտ եւ ոչ ամբողջական ցանկին մաս կը կազմեն քաղաքական իրադարձութիւններու առարկայական մեկնաբանումը, ընկերա-տնտեսական ազդակներու յեղաշրջման ըմբռնումը, կրթական մարզին ծրագիրներուն երկարաշունչ իրագործումներուն քննարկումը իրենց հիմնական մարդկային եւ ազգային արժէքներուն առաւելութիւններուն եւ թերութիւններուն բացայայտումով եւ գնահատումով, տոհմիկ աւանդութիւններու եւ սովորութիւններու այլափոխութեան պատճառներուն հասկացողութիւնը, մշակութային արտայայտութիւններուն մաղուած ամփոփումը եւ անոնց նպատակարարութեան դատումը, գրական ստեղծագործութիւններուն աօրեայ կեանքին հետ առնչուածութեան եւ ազդեցութեան հարցադրումը: Նաեւ՝ ընկերային, հանրային, հասարակական լուսանկարներու, տեսա-լսողական արտադրութիւններու փնտռութիւնը, արխիւային մեկտեղումը եւ հետազոտութիւնը եւ մանաւանդ մեր ապրած երկիրներուն մշակոյթներուն եւ ընկերային միջավայրին հետ մեր փոխ-յարաբերութիւններուն հաշուետոյութիւնը:

Սփիւքի ներկային հաւաքական ամբողջական կարելիութիւններուն գիտակցութեան արդիւնաւորման մեկնակետը սփիւքի մարդուժին ցանկազրութիւնն է: Յաւեւ փոքրացող երկրագունդին եւ տեղեկութիւններու փոխանակման ակնթարթային միջոցներուն արագ տարածումով, քաղաքակրթութիւններու ձուլումը եւ ազգային-անհատական ինքնութիւններու պահպանման պայքարը կը ստանայ տարերային բնոյթ: Նոր համամարդկային արժէքներ իրենց հրապարակման միջոցներուն ուժգնութեամբ մոռացութեան կը դատապարտեն փոքրամասնական ինքնութիւններու իւրայատուկ արժէքները: Սփիւքի մարդուժի մանրամասն ցանկազրութիւնը կարելի է կատարել առանձին առանձին տարբեր երկիրներու մէջ գործող եւ ստեղծուելիք ազգային տարբեր տեղեկատուական կեդրոններու կողմէ եւ ապա՝ գանձք փոխանակել համակարգիչներու միջոցով: Մարդուժի ցանկազրութիւնը ինքնանպատակ գործունէութիւն մը ըլլալէ աւելի միջոց մըն է անոնց կարելիութիւններուն օգտագործման գործնական ծրագրումին: Ընդհանրապէս, համաշխարհային մամուլին մէջ տնտեսական, քաղաքական, ստեղծագործական մարզերու մէջ ասուպանման գերազանցող էան-երը կրնան վերածուիլ ազգային օգտագործելի գորութեանականութեան, եթէ մնայուն կառոյցներ փութան անոնց ծանօթանալու եւ առաջարկելու՝ յարմար ու արժանի հասարակական դերակատարութիւն:

Սփիւքի ապագային սահմանումը վերացական, ենթակայական եւ զգացական տեսիլքներուն հետ միաժամանակ կը յենի չոր իրականութիւններու առարկայական վերլուծումներուն վրայ: Չոր իրականութիւններուն ամէնէն աղիտալին, ժամանակին երկարութեան հետ խոտոր համեմատող ազգային ինքնութեան աղաւաղումն է: Պատմական եւ ժամանակակից հպարտութիւններ հազուադէպօրէն կրնան զսպել սահանքը դէպի ուրացումի մութ լուսութիւնը: Լինելութեան համոզիչ յետին պատճառաբանութեան բացակայութիւնը կը մնայ խոշորագոյն արգելք կասեցնելու տրամաբանական մտածողութեան եւ զգացական ապրումներու անհաշտութեան արդիւնք եղող եղծումը:

Լիբանանի մեջ Հայագիտական Հիմնարկները, իրենց դասական ծրագիրներով, յետ-պատերազմեան տարիներուն բնականաբար կորսնցուցին իրենց կենսունակութիւնը, բազմաթիւ պատճառներով, որոնցմէ կարելի է թուել ընդհանրապէս գրական պատմական ճիւղերուն հանդէպ եղած գոնժմական կեանքի մտածելակերպէն բխող վերապահումները, ուսուցող նիւթերուն հանդէպ հետաքրքրութեան նուազումը, եւ մանաւանդ անոնց վիճելի նպատակայարմարութիւնը:

Արդ, դասական հայագիտական դասընթացքներուն հետեւող ուսանողներուն նօսրացող թիւին բացատրութիւնը մեզ կ'առաջնորդէ դէպի տարբեր ուղիներ որոնք որպէս հայագիտական նիւթեր կրնան միաժամանակ առնչուած ըլլալ մեր ազգային գործնական առօրեային եւ սատարեն անոր ուժականութեան, հասնելու համար սահմանելի հեռակայ հաւաքական նպատակներու:

Եզրակացութիւն

Սփիւռքը իր հասարակական կառոյցներով տասնեակ տարիներէ իվեր կը շարունակէ կեդրոնանալ Հայապահպանման եւ ցեղասպանութեան ճանաչումի աշխատանքներուն վրայ որոնք իրենց ներկայ կրաւորական իրավիճակով վերածուած են գրեթէ ինքնանպատակ ծրագիրներու իրենց վախճանական անորոշութիւններով:

Հայապահպանումն ու ցեղասպանութեան ճանաչումը միջոցներ են հասնելու համար սահմանելի ազգային հիմնական նպատակներու, նոյնիսկ եթէ անոնք այժմ նկատուին՝ երազային: Հայապահպանումն ու ցեղասպանութեան ճանաչումը էական բայց հանգրուանային միջոցներ են վերագտնելու համար մեր անժամանցելի ազգային իրաւունքները պայմանաւ որ կարենանք մշակել ապագայի համապարփակ ու գոնժմական ծրագիրներ:

Մկրտիչ Պուլտուքեան

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Ե. ՆԻՍՏ ՈՒՐԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍ, 2005

Ռ-ազմավարական մտածողութեամբ, ապագայի ծրագրաւորումը նկատի կ'առնէ հաւանական զարգացումներու տարբերակներուն յարմարաւէտ պատասխաններու ուսումնասիրութիւնը: Հաւանական բոլոր կարելիութիւններու սենարիոններու մշակումը, քաղաքական մշակոյթի էական տարրերէն մէկն է:

Միջին Արեւելքի առկայ անկայուն քաղաքական իրավիճակը, իր բազմաթիւ կարելիութիւններուն կողքին, կ'ընդգրկէ սահմանային փոփոխութիւններ ու զանգուածային տեղաշարժեր, որպէս շարունակութիւն, ազգային ու կրօնական պատմական պայքարներու:

Տրամաբանական ենթադրութիւններով, Ազգային Դատի հետապնդումը, իր համապարփակ ծրագրաւորումով, պէտք է պարունակէ մեր ամբողջական իրաւունքներուն վերատիրանալու կարելիութիւնները ու այդ ուղղութեամբ կատարուելիք նախապատրաստական աշխատանքներու ծիրը:

Ցեղասպանութեան ճանաչումը, իր էական կարեւորութեամբ հանդերձ, ինքնանպատակ պայքար չէ, այլ՝ հանգրուանային միջոց մը, հասնելու հողային ու վնասաց հատուցման ազգային ամբողջական իրաւունքներուն:

Թուրքիան, հակառակ իր ներկայ զինուորական զորութեան, վտանգուած է ազգայնական ու ընկերային հաւանական տագնապներէ: Տարածքաշրջանին, սահմանային փոփոխութիւններու շարքին, նկատի կ'առնուի անկախ Քիւրտիստանի մը գոյացման հաւանականութիւնը:

Վերոյիշեալ հաւանական ենթադրութիւնները մեկնակէտ ունենալով, ազգային պահանջատիրական հեռակայ ծրագիրը, պէտք է ընդգրկէ, յարմարաւետ պատասխաններ, հետեւեալ հարցադրումներուն.

Ա. Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումէն ետք, ի՞նչ պէտք է ըլլայ մեր պահանջատիրական ծրագիրը:

Բ. Պատրաստ ենք դիմակալելու արդար հատուցման ուղղութեամբ կատարուելիք միջազգային դատարաններու ներկայանալու օրինական ու փաստական տուեալներու հաւաստի թղթածրարներով:

Գ. Եթէ հրաշքով, Սերի դաշնագիրը գործադրուի, արդէօ՞ք, որեւէ մէկ տեղ, գոյութիւն ունի պատրաստի ռազմավարական ծրագիր, վերաբնակեցումի վերաբերեալ:

Պայման չէ ցեղապաշտ ըլլալ, սերերելով ազգային յտաջիկայ նոր հազարամեակին, որպէս շարունակութիւն անցեալի հինգին կամ ութին, ըստ՝ հնագէտներու յաւելեալ դարերուն: Պատմական բոլոր շրջաններուն, թափառական Հայուն կողմնացոյցը մնացած է Արարատը, որպէս հոգեկան դրախտավայր, հակառակ հազարամեակներու շարունակական թշուառութեան:

Մկրտիչ Լ. Պուլտութեան
Օգոստոս 10, 2005

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԶ

Զ. ՆԻՍ

ՌԻՔԱԾ, 12 ՕԳՈՍՏՈՍ, 2005

Հայաստան-Սփիւռք գործակցութեան ուղղութեամբ կատարուած ընդհանուր աշխատանքները կը մնան անբաւարար, իրենց ոչ-հետեւողական անկազմակերպ իրավիճակով ու փոխադարձ ակնկալութիւններու, ենթակայական անիրապաշտութեամբ:

Սփիւռքը, իր ցեղային ու պատմական ակունքներէն փխտող հաւատարմութեամբ, կը շարունակէ հաւատալ Հայաստանի ապահովութեան ու բարօրութեան կենսական կարեւորութեան, յուսալով որ Հայրենիքը, իր կարգին, կարողանայ բաւարարել իր հայրենասիրական սահմանելի ակնկալութիւնները:

Հայաստան՝ որպէս պետութիւն ու ժողովուրդ, կը հաւատայ հզօր Սփիւռքի բարոյական պարտաւորութիւններուն, զանգուածային զօրաշարժի մը միջոցով, վերածուելու Հայրենիքի տնտեսական զարգացման մրցակցային առաւելութեան ու ակնկալուած շարժիչ ուժին:

Տնտեսական մարզին մէջ գոյութիւն ունեցող փոխադարձ ակնկալութիւններու ու կարելիութիւններու առարկայական ու գործնապաշտ քննարկումը նախապայման է, արժէտներով համար ցարդ կատարուած աշխատանքին տարողութիւնն ու նպատակայարմարութիւնը:

Որպես նախագգուշուքին, ընդհանրապես, տնտեսական քանակական տուեալները վերապահութեամբ պէտք է ընդունուին, իրենց բնական բարդութիւններու ու երբեմն ոչ քափանցիկութեան պատճառով:

Հայաստանի Տարեկան Միախառն Ներքին Արդիւնքը (GDP), 2004 թուականին բարձրացաւ \$2.85 միլիարտի, կամ՝ \$950 մէկ շնչի (per capita), բնակչութեան մօտաւորապէս կէսը մնալով՝ աղքատութեան սահմանէն վար, օրական մէկ տոլարի եկամտով: 2005 թուականին, կ'ակնկալուի հաւասարիլ Սովետական Հայաստանի վերջին տարուան ՀՆԱ-ին: Վերջին չորս տարիներուն, տարեկան միջին աճը եղաւ 11%:

Ըստ Միացեալ Ազգերու Մարդկային Զարգացման 2004 թուականի ցուցանիշներուն, 177 երկիրներու ցանկին մէջ, Հայաստան կը գրաւէ 82րդ տեղը: Հետաքրքրական է նկատի առնել, հետեւեալ յատկանշական դասաւորումները.

Այն երկիրները ուր Հայկական գաղութներ գոյութիւն ունին, իրենց մեծամասնութեամբ աւելի բարձր ցուցանիշ ունին, մինչ՝ Հայաստանի սահմանակից երկիրները ունին, հետեւեալ աւելի ցած դասաւորումը. Թուրքիան 88րդ, Ազրպէյճանը 91րդ, Վրաստանը 97րդ, Պարսկաստանը 101րդ:

Յիսունէ աւելի երկիրներու մէջ, տարագիր եւ կամաւոր գաղթական Սփիւռքահայերու մօտաւոր թիւը կ'ենթադրուի ըլլալ 3,500,000, որուն երկու միլիոնը, Արեւմտեան ու Միջին Արեւելքի երկիրներու մէջ: Ըստ մօտաւոր ենթադրութիւններու հիման վրայ, Արեւմտեան Սփիւռքի 500,000 ընտանիքներու տարեկան եկամուտը քանի մը տասնեակ միլիարտ տոլարի կընայ հասնիլ:

1988-էն սկսեալ, Սփիւռքը իր կարողութեան սահմանին մէջ կատարեց հետեւեալ ներդրումները, պահանջներու բնութեան շարքով.

- Մարդասիրական շտապ օգնութիւն, երկրաշարժի հետեւանքով:
- Հայրենասիրական, բազմաբնոյթ ներդրումներ, Հայկական կազմակերպութիւններու եւ անհատ անձերու կողմէ, տնտեսական, ընկերային, առողջապահական, կրթական եւ մշակութային մարզերու մէջ, մօտաւորապէս մէկ միլիարտ տոլարի արժողութեամբ:
- Վերոյիշեալ նոյն մարզերուն մէջ՝ փորձառութիւններու փոխանակում, տեսական ուսումնասիրութիւններու ու գործնական այլ միջոցներով:
- Ըահադիտական սահմանափակ ներդրումներ, փոքր ճարտարարուեստի ու զբօսաշրջիկութեան մարզերէն ներս:

Ուրեմն, միջին հաշուով, տարեկան մօտաւորապէս 70 միլիոն տոլարի հայրենասիրական ներդրումը մօտաւորապէս երկու միլիոն հաշուող արեւմտեան Սփիւռքի կողմէ, Հայաստանի անկախութեան սկզբնական շրջանին, պետական պիտճէին կարեւոր տոկոսը կը կազմէր:

Բացառիկ տագնապներու պարագային, հայրենասիրական օգնութիւնը, իր փրկարար դերը կատարած է որոշ ժամանակամիջոցի մը մէջ: Սակայն, ոչ մէկ պարագային կարելի է զայն վերածել պետական մնայուն եկամուտի աղբիւրի, իր հոգեբանական ու հասարակական ժխտական անդրադարձներուն պատճառով:

Ինչ կը վերաբերի շահադիտական ներդրումներու սակաւութեան, վերոյիշեալ Մարդկային Զարգացման ցուցանիշներուն հիման վրայ, կարելի է եզրակացնել թէ անհատական երկրափոխութեան նախապայմաններուն կարեւորագոյնը կը մնայ մարդկային զարգացման յարմարագոյն միջավայրի ընտրութիւնը:

Բոլորովին տարբեր մօտեցումով, նոյնը կը հաստատէ հետեւեալ պատճառաբանութիւնը, քաղուած՝ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՅՑ, Անկախութեան անցումային 10 տարիները Հայաստանում» ուսումնասիրութենէն:

«Վերջին ժամանակներս ներդրումային միջավայրի ուսումնասիրությանն ուղղուած բոլոր հետազոտութիւնները որպէս ներդրումների ներգրաւումը կասեցնող հիմնական գործօններից մէկը նշել են կորուպցիան եւ մասնաւորապէս, վարչարարական խոչընդոտները»:

«Ներդրումների փոքր ծաւալները հիմք են տալիս փաստելու, որ իրական ներդրողը Հայաստանը չի դիտարկում որպէս ներդրումների համար գրաւիչ երկիր: Ներդրումներ կատարելու վերաբերեալ որոշումների ընդունման վրայ ազդում են մի շարք գործօններ, որոնք ընդհանուր առմամբ յանգում են քաղաքական եւ սոցիալական կայունութեանը, շուկայի մատչելիութեանը, օրենսդրական դաշտի ապահովմանը, աշխատուժի որակի եւ նրա արժէքի միմեանց համապատասխանատուութեանը, ռեսուրսների, բարձր տեխնոլոգիաների, ֆինանսական միջոցների մատչելիութեանը, ակնկալուող շահոյթի եւ շուկայի մեծութեանը, ենթակառոյցների որակին եւ եւայլն: Միաժամանակ չի կարելի անտեսել նաեւ այնպիսի գործօն, ինչպիսին աշխարհաքաղաքական դիրքն է, որը որոշակի դէպքերում, (Հայաստանի դէպքում մասնաւորապէս՝ մասնակի շրջափակման եւ ընթացող հակամարտութեան պայմաններում) կարող է առաւելագոյն բացասական ազդեցութիւն ունենալ ներդրումների ներգրաւման համար:»

Հայաստանի անկախութենէն ետք, Սփիւռքի կողմէ կատարուած անհատական շահադիտական ներդրումները ընդհանրապէս եղան, համեստ ու հազուադէպ, իրենց յաջողութիւններու ու ձախողութիւններու զրոյցներով: Դժբախտաբար, Հայաստանի տնտեսական մթնոլորտը տակաւին պէտք եղած համոզիչ ու առարկայական տուեալները չունի, Սփիւռքի գործարարները խրախուսելու որպէսզի շահադիտական ներդրումներ կատարելով, վերջնական կեցութիւն հաստատեն ու քաղեն՝ իրենց շահադիտական ներդրումին նիւթական արդար շահն ու հոգեկան գոհունակութիւնը:

Նոյն շրջանին, Սփիւռքը ապրեցաւ տարբեր բնոյթի անցումային շրջան մը, յոյսի ու յուսահախաբութեան հակասութիւններէն ծնած վերածնունդի ու ճուլումի անորոշութիւններով: Մանաւանդ՝ Միջին Առեւելքի Հայկական գաղութները դիմագրաւեցին ապահովական ու տնտեսական տագնապներ, ու կորսնցուցին իրենց երբեմնի ստեղծագործական կենսունակութիւնը: Աւելի կամ նուազ չափերով, Սփիւռքի բոլոր հասարակական կառոյցները դիմագրաւեցին պիտոճեական դժուարութիւններ, պատճառ դառնալով յաւելեալ դասալքութիւններու, մանաւանդ՝ կրթական մարզին մէջ: Վերջին գոհերէն մէկը եղաւ Մելքոնեան Կրթական Հաստատութիւնը իր փակման հապճեպ որոշումով:

Եթէ Հայաստան Սփիւռք փոխ-յարաբերութիւնները պիտի մնան զգացական, պատահական, մշակութային ու զբօսաշրջիկութեան մակարդակի վրայ, այժմ գոյութիւն ունեցող դրութիւնը բաւարար է: Իսկ եթէ կը նպատակադրենք որ Հայաստան 10, 100, 1000 տարի ետք վերածուի Սփիւռքի Հայութեան վերջնական Հայրենիքին, այդ պարագային ճանապարհը շատ անելի դժուար է ու կը կարօտի ազգային հաւատամքի մը վրայ հիմնուած նպատակասլաց աշխատանքի, բոլորովին տարբեր արժէչափերով ստեղծելու օրինաց երկիրը, որպէսզի հայրենասիրութիւնը վերածուի ամենօրեայ ապրող ներդրումի, իր գոյութեանական առաւելութիւններով ու իրագործումի անհատական ու հաւաքական գոհունակութիւններով:

Յառաջիկայ տասնամեակը պէտք է ըլլայ Հայաստանի եւ Սփիւռքի համագործակցութեամբ համահայկական, համապարփակ, երկար ժամկետային ծրագիրներու մշակման ու գործադրութեան շնչանի մը: Համապարփակ ծրագիրը պէտք է ընդգրկէ, ազգային նպատակներու յստակացումը՝ պահանջատիրական, քաղաքական, տնտեսական, մշակութային ու Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններու մարզերուն մէջ ինչպէս նաեւ անոնց իրագործումի յարմարաւետ միջոցներուն կազմակերպումն ու գործադրութիւնը, Հայկական ներուժի ամբողջական լարումով:

Հաւատալով Հայաստան-Սփիւռք դրական, կառուցողական գործակցութեան երկարաշունջ աշխատանքին կարելորութեան, ազգային ապահովութեան,

հասարակական ու անհատական կենսական մակարդակներու վրայ, Հայրենիքի հզորացումը անպայման կ'ունենայ իր դրական դրսևորումը Մփիտքի մշակութային ինքնութեան պահպանման աշխատանքին մէջ: Ինչպէս նաև, Մփիտքի վերակազմաւորումը ազգային նպատակներու շուրջ, կ'ունենայ իր օգտաշատ դերը, Հայաստանի բարգաւաճումի ընթացքին:

Մկրտիչ Լ. Պուլտուբեան
Յուլիս 25, 2005

Օգտագործուած Աղբիւրներ

- COMMISSION STAFF WORKING PAPER, European Neighbourhood Policy, Country Report, Armenia, COM(2005)
- UNDP, HUMAN DEVELOPMENT REPORT 2004
- THE WORLD FACTBOOK, Armenia, 2004
- Armenia 2020, Research 3: Armenia, perspectives of modernisation in the light of corruption and public administration.
- Armenia 2020, Research 4: Diaspora-Homeland Issue Paper, Research Team Leader: Thomas J. Samuelian, J.D., Ph.D.
- Armenia 2020, Research 10: Oligarchs in Armenia
- Armenia and its Diaspora, is there scope for a stronger economic link? Aleksandr V. Gevorkyan & David A. Grigorian
- Embassy of the United States of America, Yerevan, Country Commercial Guide, Armenia FY 2005
- International Monetary Fund, Country Report 2004, Republic of Armenia
- The World Bank Group, Armenia Data Profile
- ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՅՑ, Անկախութեան անցումային 10 տարիները Հայաստանում
- DIASPORA THE COMPARATIVE ADVANTAGE FOR ARMENIA, Tatoul Manaseryan, Armenian International Policy Research, 2004

ԱՌԱՋԱՐԿ

1999 թուականէն իվեր, Հայաստան-Մփիտք երկու խորհրդածոյողութիւններուն ու բազմաթիւ տեղական այլ հանդիպումներու ընթացքին, արծարծուեցան համազգային բնոյթ ունեցող նոյնանման հարցեր, հրչակուեցան համաձայնական որոշումներ ու մնացին տարակարծութիւններ: Ընդհանրապէս, հարցերու քննարկումը եղաւ մշակութային, կրթական, քարոզչական, տնտեսական ու տեղեկատուական մարզերու մէջ, համապարփակ ազգային քաղաքական հայեցակարգի մը բացակայութեան:

Առաջին խորհրդածոյողութիւնի հռչակագիրը մնաց անհետեւանք, իսկ երկրորդ խորհրդածոյողութիւնի որոշումները, Հայաստան-Մփիտք փոխ-յարաբերութիւններու զարգացման համար, անյարմար ու անբարար եղան: Գործնական արդիւնքներու բացակայութեան, հանդիպումները վերածուեցան տեսական բարենադրանքներու: Բոլոր մակարդակներու վրայ, գաղափարներու փոխանակումը իր օգտաշատութեամբ կը մնայ անհրաժեշտ, բայց ոչ-բարար նախապայման, ծրագրելու համար Ազգին սպազան: Համապարփակ հայացակարգի մը պարունակին մէջ մշակուած ծրագիրներու հանգրուանային գործադրութիւնը, իրենց անմիջական ու հեռակայ արդիւնաւետութեամբ, էական քայլեր են խօսքը վերածելու գործի:

Որպես պարզ քաղաքացիներ կամ մտաւորականներ, մեր պարտաւորութիւնն ու իրաւունքն է արժեւորել կատարուած աշխատանքները, քննադատել թերութիւնները ու առաջարկել դրական, կառուցողական տարբեր ծրագիրներ: Ազգային գերագոյն ղեկավարութեան էական դերն է, կշռադատել հանրային կարծիքի ակնկալութիւնները եւ կարելիի սահմանին մէջ, անոնց բաւարարումը, գործնական միջոցառումներով:

Մեկնակէտ ունենալով, Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովի որոշումը ու ՀՀ Նախագահ Ռոպէրթ Քոչարեանի ու Վեհափառ Արամ Ա. Կաթողիկոսի հետեւեալ յայտարարութիւնները.

Խորհրդաժողովի որոշումներէն.

Ա. Մէկ տարիով կ'երկարէ կազմակերպիչ յանձնախումբին կեանքը
Բ. Յանձնախումբին վրայ պարտք կը դնէ մինչեւ վեց ամիս առաջացնել վերոյիշեալ վեց զեկոյցներուն համապատասխան մասնագէտներէ բաղկացած վեց յանձնախումբեր եւ եօթներորդ յանձնախումբ մը, որ պիտի ուսումնասիրէ կառոյցի հարցը:

ՀՀ Նախագահ Ռոպէրթ Քոչարեան

Անհրաժեշտ դասեր քաղելով անցեալի փորձից, մենք երկխօսութեամբ պէտք է յտակացնենք ազգային առաջնահերթութիւնները եւ գտնենք այնպիսի կազմակերպչական ձեւեր, որոնցմով հնարաւոր կը դառնայ երկխօսութիւնը տեղափոխել առարկայական խնդիրների լուծման հարթութեան: Մենք պարզապէս այլընտրանք չունենք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս

Այլ խօսքով, պէտք է ստեղծել հիմնական առաջադրանքներու շուրջ Հայաստան-Սփիւոք գործակցութիւնը դիւրացնող այնպիսի աշխատանքային մասնագիտական խմբակներ ու տիմամիք մեքանիզմներ, որոնք կրնան ապագային բնական ընթացքով վերածուիլ մնայուն կառոյցներու:

Արդ.

Փափաքելի պիտի ըլլար, որպէս գործնական արդիւնք Հայ մտաւորականներու այս շահեկան հանդիպումին, Նորին Սուրբ Օծութիւն Վեհափառ Տէրը, Արամ Ա. Կաթողիկոս, խորհրդակցաբար Սփիւոքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ, մախաձեռներ հանդիպում ունենալ Հայաստանի Հանրապետութեան գերագոյն ղեկավարութեան հետ, հիմնարկէք ընելու, համաձայնական, համազգային, կառոյցի մը որ կրնայ ստանալ հետեւեալ ձեւը.

Ազգային հիմնահարցերու ղեկավարման համար անհրաժեշտ է ունենալ մնայուն Համազգային կառոյց մը, իմաստուն, պայծառատես, լայնամիտ, համեստ, պարկեշտ, պատասխանատու, քաջ, պատկառելի անձնաւորութիւններէ կազմուած, առաջնորդելու համար մտաւորական արժանիքներով օժտուած ստեղծագործ ու հաւատաւոր միութեան ու մասնագիտական փորձառութեամբ հարուստ աշխատակազմեր, որոնք գոհունակութեամբ ընդունին ծառայել համայնական շահերուն, անշշուք, հեռու հատուածական նկատառումներէ ու անհատական փառասիրութիւններէ, անկաշկանդ հունաւորելու համար ազգին ապագան, հաւաքական ապահովութիւնն ու բարօրութիւնը:

1. Գոյացումը Գերագոյն Խորհուրդի մը, կազմուած 7-11 հայրենի ու սփիւոքեան պատկառելի, երէց ու իմաստուն անձնաւորութիւններէ որոնք իրենց փորձառութեամբ, գիտութեամբ, իմաստութեամբ, համահայկական ու միջազգային կապերով, որպէս ազգային էական ու ճակատագրական հարցերու խորհրդատու, իրենց անշահախնդիր կարծիքը փոխանցեն Համահայկական Խորհուրդին: Որպէս խորհրդանշական ազգային գերագոյն մարմին, Գերագոյն Խորհուրդը կը մնայ անանուն, պահելու համար իր խորհրդաւոր ու անձեռնմխելի անկախութիւնը:
2. Կազմաւորումը Համազգային Խորհուրդի մը, մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւոքի Հայկական Համայնքներու ներկայացուցիչներէ:

Խորհուրդը, որպես խոհրդակցական մարմին՝ կը սահմանէ Հայաստանի ու Սփիւռքի համապարփակ արեւելումը՝ քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային ոլորտներէն ներս: Խորհուրդի ընտրովի կազմը կ'ունենայ 120-180 անդամ, ըստ Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի Հայկական Համայնքներուն համեմատական մօտաւոր թիւերուն:

3. Կազմաւորումը Համազգային Գործադիր մարմնի մը, կազմուած 25-35 անդամներէ, ներկայացնելու Հայաստանի Հանրապետութիւնն ու Սփիւռքը, Համազգային Խորհուրդի առած որոշումները իրագործելու համար: Գործադիր մարմինը կը ծրագրէ ու կը գործադրէ Համահայկական ծրագիրներ, հետեւեալ աշխատանքային կազմերու (task forces) միջոցով.
 - 3.1. Քաղաքական ու քարոզչական
 - 3.2. Տնտեսական ու ընկերային
 - 3.3. Մշակութային ու կրթական
 - 3.4. Փոխ-յարաբերութիւններու ու տեղեկատուութեան
 - 3.5. Օրինական ու կազմակերպչական
4. Նշանակումը Սփիւռքի Տեղական Գործադիր Խորհուրդներու, որոնք կ'իրագործեն Վերին Մարմիններու մշակած ծրագիրները:
 - 4.1. Համահայկական Գործադիր Մարմինը, կը ծրագրէ անմիջական, միջին ու երկար ժամկետային ծրագիրներ, ու առաջնահերթութիւններու կարգով կը հսկէ անոնց գործադրութեան, Տեղական Գործադիր Խորհուրդներու միջոցաւ:
 - 4.2. Վերոյիշեալ կազմակերպական կառոյցին ծրագիր կանոնագիրը կը մշակուի մարդկային իրաւանց օրէնքներու եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան օրինագիծին մէջ, ինչպէս նաեւ՝ Սփիւռքի տարբեր երկիրներու օրէնքները նկատի առնելով:

Մկրտիչ Լ. Պուլտուքեան
Օգոստոս 9, 2005